ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

N Ե-01/2662
19 նոյեմբեր
2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
ՂԵԿԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի գործընկերներ,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 19.09.2025 թվականին Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավարին հասցեագրված գրության համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Ջուջևան բնակավայրի վարչական տարածքում գտնվող 11-056-0297-0001 կադաստրային ծածկագրով պետական սեփականություն հանդիսացող անտառում, առանց օրենքով սահմանված կարգի և համապատասխան փաստաթղթերի 1156մ^2 մակերեսով տարածքում իրականացվել են ցանկապատման աշխատանքներ, որի մեջ կառուցված է երկու շինություն՝ 44մ^{2}և 23 մ^2 մակերսով, ինչպես նաև 1,4 մ^2 հիմքով պարիսպ: Միաժամանակ գրությունով պահանջվել է, որ համայնքի իրավասության սահմաններում ձեռնարկվեն միջոցառումներ:

Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի համաձայն՝

1. Համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝
1) հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.
2) հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ.
3) հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ.
4) հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ.
5) հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողիբերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ:
2. Համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.
2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.
3) ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.
4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Այսինքն, եթե խնդիրը դիտարկենք նշված իրավական նորմերի հակասությունների շրջանակներում կստացվի հետևյալը.

- նույն մարմինը ընդունել է երկու նորմատիվ իրավական ակտ,
- Երկուսն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ,
- Դրանց նորմերի միջև կա հակասություն,
- 1-ին ու 2-րդ կանոնները տվյալ իրավիճակում չեն լուծում կոլիզիան, այսինքն՝ չկա ավելի բարձր ուժ ունեցող նորմ, և չկա «Հատուկ նորմ-ընդհանուր նորմ» հարաբերություն,

ապա կիրառվում է 3-րդ կանոնը, այսինքն կիրառելի են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

Սույն դեպքում՝ Հողային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 15.06.2001 թվականին, իսկ Անտառային օրենսգիրքը՝ 17.12.2005 թվականին՝ ավելի ուշ, քան Հողային օրենսգիրքը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Օրենսդրական ակտի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 09.07.2020 թվականի 1159-Նորոշման 10-րդ և 18-րդ կետերով, խնդրում եմ Ձեր իրավասության շրջանակներում ներկայացնել պաշտոնական պարզաբանում հետևյալ հարցերի շուրջ.

արդյո՞ք Անտառային օրենսգրքի 9-րդ հոդվածով տեղական ինքնակառավարման մարմիններին վստահված իրավասությունների սահմանումը համարվում է սպառիչ և բացառող այն իմաստով, որ համայնքի ղեկավարը իրավասու չէ կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու (ապամոնտաժելու) պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերում իրականացված ինքնակամ շինարարության հետևանքները, ինչպես նաև սահմանված կարգով կիրառելու վարչական պատասխանատվություն շինարարություն իրականացրած անձանց նկատմամբ:

Միաժամանակ խնդրում ենք պարզաբանել, թե նշված իրավահարաբերությունների շրջանակում պետական անտառներում հայտնաբերված ինքնակամ կառույցների նկատմամբ որևէ իրավական ակտով համայնքի ղեկավարի համար սահմանվա՞ծ է ապամոնտաժման կամ վարչական տույժեր կիրառելու կամ այլ իրավասություն, և եթե ոչ՝ ապա ո՞ր պետական մարմինն է լիազորված իրականացնել նման միջոցառումներ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄՀԵՐ ԱՂԱՄՅԱՆ

կատ. Գլխավոր մասնագետ
Ա. Անանյան

1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.
2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.
3) ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.
4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Այսինքն, եթե խնդիրը դիտարկենք նշված իրավական նորմերի հակասությունների շրջանակներում կստացվի հետևյալը.

- նույն մարմինը ընդունել է երկու նորմատիվ իրավական ակտ,
- Երկուսն էլ ունեն հավասար իրավաբանական ուժ,
- Դրանց նորմերի միջև կա հակասություն,
- 1-ին ու 2-րդ կանոնները տվյալ իրավիճակում չեն լուծում կոլիզիան, այսինքն՝ չկա ավելի բարձր ուժ ունեցող նորմ, և չկա «Հատուկ նորմ-ընդհանուր նորմ» հարաբերություն,

ապա կիրառվում է 3-րդ կանոնը, այսինքն կիրառելի են ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը:

Սույն դեպքում՝ Հողային օրենսգիրքն ուժի մեջ է մտել 15.06.2001 թվականին, իսկ Անտառային օրենսգիրքը՝ 17.12.2005 թվականին՝ ավելի ուշ, քան Հողային օրենսգիրքը:

Ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Օրենսդրական ակտի և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 09.07.2020 թվականի 1159-Նորոշման 10-րդ և 18-րդ կետերով, խնդրում եմ Ձեր իրավասության շրջանակներում ներկայացնել պաշտոնական պարզաբանում հետևյալ հարցերի շուրջ.

արդյո՞ք Անտառային օրենսգրքի 9-րդ հոդվածով տեղական ինքնակառավարման մարմիններին վստահված իրավասությունների սահմանումը համարվում է սպառիչ և բացառող այն իմաստով, որ համայնքի ղեկավարը իրավասու չէ կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու (ապամոնտաժելու) պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերում իրականացված ինքնակամ շինարարության հետևանքները, ինչպես նաև սահմանված կարգով կիրառելու վարչական պատասխանատվություն շինարարություն իրականացրած անձանց նկատմամբ:

Միաժամանակ խնդրում ենք պարզաբանել, թե նշված իրավահարաբերությունների շրջանակում պետական անտառներում հայտնաբերված ինքնակամ կառույցների նկատմամբ որևէ իրավական ակտով համայնքի ղեկավարի համար սահմանվա՞ծ է ապամոնտաժման կամ վարչական տույժեր կիրառելու կամ այլ իրավասություն, և եթե ոչ՝ ապա ո՞ր պետական մարմինն է լիազորված իրականացնել նման միջոցառումներ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՄՀԵՐ ԱՂԱՄՅԱՆ

կատ. Գլխավոր մասնագետ
Ա. Անանյան